

## Կարծիք

Ջուլիետա Գագիկի Հարթեյանի՝ «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը («Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով)» վերնագրով ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին:

Ատենախոսական աշխատանքը նվիրված է դասավանդման մեթոդիկայի կարևորագույն խնդիրներից մեկին՝ ուսուցման որակի բարձրացմանը: Այս խնդրի լուծման համար ընտրված է Վ. Կ. Դյաչենկոյի կողմից առաջադրված կոլեկտիվ ուսուցման հանրահայտ եղանակը, ինչը իրագործվում է միջին դպրոցի 7-րդ և 8 -րդ դասարաններում ֆիզիկայի ուսուցման օրինակով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից՝ 152 անուն գրականություն, ընդհանուր ծավալը՝ 107 էջ: Ատենախոսությունում զետեղված են երկու հավելվածներ՝ 18 էջ ընդհանուր ծավալով:

Ներածության մեջ հիմնականում ներկայացվում է հետազոտության արդիականությունը, նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցը դաս-դասարանային համակարգի շրջանակում» գլուխը հիմնականում ունի նախապատրաստական բնույթ: Նրա հինգ ենթագլուխներից առաջինում քննակվում է ուսուցման սկզբունքների հիմնահարցը՝ դասական և կոլեկտիվ ուսուցման պայմաններում, վերջինիս առանձնահատկությունները և նշանակությունը ուսումնական գործընթացի կազմակերպման տեսանկյունից: Երկրորդ ենթագլխում ներկայացվում են կոլեկտիվ ուսուցման՝ Վ. Կ. Դյաչենկոյի կողմից ներկայացված ութ սկզբունքները: Երրորդ գլխում քննարկվում են կոլեկտիվ ուսուցման եղանակի երեք փուլերը, դրանց իրականացման համար

ուսուցանվող թեմաներին ներկայացվող պահանջները, որոնց մեջ առանձնացվում են ոչ գծային հաջորդականությունը և քարտային թեմաների կազմման յուրահատուկ մեթոդիկան: Չորրորդ ենթագլուխը վերաբերում են «Ֆիզիկա» առարկայի ուսուցման որոշ գործիքակազմի: Հինգերորդ գլխում դիտարկվում է կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցը հիմնական դպրոցի 7-րդ և 8-րդ դասարաններում՝ «Ֆիզիկա» ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որ վերնագրված է «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացումը «Ֆիզիկա» առարկայի ուսուցման օրինակով», նվիրված է ատենախոսի հիմնական մտահղացումների իրականացմանը: Նախ չորս գլուխներից առաջինում բերված են հետազոտության ամբողջականության և անկախ դիտարկման համար անհրաժեշտ նյութեր: Երկրորդ գլխում ներկայացվում են կոլեկտիվ ուսուցման իրականացման առաջին փուլի իրականացմանն ուղղված մեթոդիկաներ: Երրորդ ենթագլխում ներկայացված են ուսուցման կոլեկտիվ եղանակով կայացման երեք փուլերի համար նախատեսված չորս կոնկրետ մոդելներ: Վերջին՝ չորրորդ ենթագլուխը նվիրված է մանկավարժական գիտափորձին: Այստեղ ատենախոսը ներկայացնում է երկու բանաձև՝ սովորողների գործունե ընդգրկվածության գործակիցը գտնելու համար, մեկը՝ ավանդական, մյուսը՝ կոլեկտիվ եղանակներով ուսուցման համար: Բերվում են փորձաքննության արդյունքները, կատարվում է անհրաժեշտ վերլուծություն:

Ներկայացվող ատենախոսությունը ավարտուն, ամբողջական, մեթոդական բարձր մակարդակով արված գիտական հետազոտություն է: Հետազոտության գիտական նորույթների մեջ կուզեի առանձնացնել ուսումնական գործընթացի կարևոր դրվագներից մեկի չափելիության համար ներմուծվող «սովորողների գործունե ընդգրկվածության գործակցի» գաղափարը և հանրակրթական դպրոցի 7-րդ և 8-րդ դասարաններում ֆիզիկայի ուսուցման չորս նոր մոդելները, որոնք կառուցված են կոլեկտիվ ուսուցման սկզբունքների հիման վրա: Ատենախոսությունը ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Ատենախոսությունը գերծ չէ որոշ թերություններից: Նշենք կարևորները.

1. Ուսանելի և օգտակար կլիներ կատարել ուսուցման դասական և կոլեկտիվ սկզբունքների համեմատական վերլուծություն: Մասնավորապես, հետաքրքիր կլիներ պարզել, թե ինչպես է լուծվում դիդակտիկայի դասական սկզբունքների հարցը կոլեկտիվ ուսուցման պայմաններում:

2. Ատենախոսության մեջ օգտագործվում է ինչպես «սովորողի գործուն ընդգրկվածության գործակից», այնպես էլ «սովորողների գործուն ընդգրկվածության գործակից» եզրույթները: Պետք է թողնել միայն երկրորդը:

3. Դժվար է պատկերացնել, որ ֆիզիկայից երկուս ստացած 12 աշակերտներ կկարողանան 15 րոպեում սովորել Նյուտոնի երեք օրենքները և դրանք լավագույն ձևով հաղորդել դասընկերներին (էջ 82):


4. Երբ ատենախոսության մեջ խոսվում է գիտելիքի մասին, ապա բնականաբար հարց է առաջանում, թե ուսուցման փոխհաղորդման եղանակի դեպքում աշակերտները իմացության ինչպիսի՞ մակարդակի են կարողանում տիրապետել: Իսկ ատենախոսության մեջ ընդհանրապես, նման խնդիր չի քննարկվում:

5. Աշխատանքում նկատվում են նաև որոշ լեզվական վրիպումներ:

Սակայն նշված թերությունները չեն ազդում ատենախոսության ընդհանուր գիտամեթոդական բարձր որակի վրա, ինչը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունը:

Ջուլիետա Գագիկի Հարթենյանի՝ «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը («Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով)» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետում թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ ատենախոսը՝ Ջուլիետա Գագիկի Հարթենյանը, արժանի է ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ մասնավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Ֆ.մ.գ.թ., մանկ. գիտ. դոկտոր պրոֆեսոր

 Ռ. Ս. Միքայելյան

Ռ. Միքայելյանի ստորագրությունը հաստատում են

Խ.Աբովյանի անվան ՀՊԱՀ գիտության քարտուղար

 Խ. Իսախյան

01.04.2021 թ.